

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՔՍԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

(Սանկտ Պետերբուրգ, 2009 թվականի դեկտեմբերի 11)

Բելառուսի Հանրապետության Կառավարությունը, Ղազախստանի Հանրապետության Կառավարությունը եւ Ռուսաստանի Դաշնության Կառավարությունը, այսուհետ՝ Կողմերը,

«Մաքսային միության ապրանքների արտաքին եւ փոխադարձ առետրի մաքսային վիճակագրություն վարելու մասին» 2008 թվականի հունվարի 25-ի համաձայնագրի իրականացման նպատակով

համաձայնեցին հետեւյալի մասին՝

Հոդված 1

Մաքսային միության Հանձնաժողովի մաքսային վիճակագրության կենտրոնը (այսուհետ՝ Կենտրոն) ստեղծվում է Կողմ պետությունների արտաքին առետրի վիճակագրության եւ փոխադարձ առետրի վիճակագրության վարման, Կողմերի լիազորված մարմինների վիճակագրական գործունեության համակարգման, այդ ոլորտում տեղեկատվության փոխանակման կազմակերպմանն աջակցելու եւ ընդհանուր հանձնարարականներ մշակելու նպատակով:

Կենտրոնը Մաքսային միության հանձնաժողովի քարտուղարության (այսուհետ՝ Քարտուղարություն) կառուցվածքային ստորաբաժանում է եւ իր գործառույթներն իրականացնում է Քարտուղարության վարչության իրավասությունների շրջանակներում:

Կենտրոնն իր գործունեության շրջանակում ղեկավարվում է «Մաքսային միության հանձնաժողովի մասին» 2007 թվականի հոկտեմբերի 6-ի պայմանագրով, «Մաքսային միության հանձնաժողովի քարտուղարության մասին» 2008 թվականի դեկտեմբերի 12-ի համաձայնագրով, Մաքսային միության շրջանակներում ընդունված այլ միջազգային փաստաթղթերով, ինչպես նաեւ սույն Արձանագրությամբ:

Կենտրոնն իր գործունեությունն իրականացնում է Կողմ պետությունների լիազոր մարմինների հետ սերտ փոխգործակցությամբ:

Հոդված 2

Կենտրոնի հիմնական գործառույթներն են՝

ապրանքների արտաքին եւ փոխադարձ առետրի մասին Կողմ պետությունների վիճակագրական տվյալների ամբողջական եւ հավաստի հաշվառման ապահովումը,

Կողմ պետությունների արտաքին առետրի եւ փոխադարձ առետրի վիճակագրական ցուցանիշների համակարգի ձեւավորումը,

Հանձնաժողովի կողմից հաստատվող՝ Կենտրոնի վիճակագրական աշխատանքների ծրագրին համապատասխան Մաքսային միության արտաքին եւ փոխադարձ առետրի վերաբերյալ վիճակագրական եւ տեղեկատվական նյութերի հրատարակումը, հրապարակումը եւ Կողմ պետությունների պետական մարմիններին հղումը,

Կողմերի պետական մարմինների պահանջով Մաքսային միության արտաքին առետրի եւ փոխադարձ առետրի վիճակագրական տվյալների տրամադրումը,

արտաքին եւ փոխադարձ առետրի, Մաքսային միության մասնակից պետությունների միջեւ եւ երրորդ երկրների հետ առետրի շրջանակներում տնտեսական համագործակցության զարգացման ընթացքի եւ միտումների վերաբերյալ տեղեկատվական եւ վերլուծական նյութերի մշակումը,

տվյալների համադրումը ապահովող եւ միջազգային կանոնների եւ չափանիշների վրա հիմնվող՝ արտաքին առետրի եւ փոխադարձ առետրի մաքսային վիճակագրության վարման միասնական մեթոդաբանության մշակումը,

Մաքսային միության շրջանակներում միասնական տեղեկատվական եւ վիճակագրական տարածության ձեւավորումը,

կադրերի ուսուցման կազմակերպման, սեմինարների եւ արտաքին առետրի վիճակագրության ու փոխադարձ առետրի վիճակագրության զարգացման հետ կապված

այլ միջոցառումների անցկացման հարցերով Կողմերի լիազոր մարմինների հետ փոխգործակցությունը,

միջազգային վիճակագրական համագործակցության իրականացումը, միջազգային վիճակագրական կազմակերպությունների աշխատանքներին մասնակցությունը,

աջակցություն առաջատար տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրմանը արտաքին եւ փոխադարձ առեստրի վիճակագրության մեջ,

արտաքին առեստրի վիճակագրության եւ փոխադարձ առեստրի վիճակագրության ձեւավորման ընթացքում օգտագործվող միասնական դասակարգիչների վարումը:

Հոդված 3

Իր վրա դրված գործառույթների կատարման համար Կենտրոնն իրավասու է՝

Կողմ պետությունների լիազոր մարմիններից անվճար ստանալ Կողմ պետությունների արտաքին առեստրի եւ փոխադարձ առեստրի վիճակագրական ընդհանուր բազայի ստեղծման համար անհրաժեշտ վիճակագրական տեղեկությունները,

ստեղծել սեփական տվյալների բազաներ,

Մաքսային միության հանձնաժողովի հանձնարարությամբ իրենց իրավասության շրջանակներում Մաքսային միության նորմատիվ եւ այլ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ եզրակացություններ տալ,

Մաքսային միության հանձնաժողովին առաջարկություններ ներկայացնել Մաքսային միության կազմի մեջ չմտնող կողմերի հետ վիճակագրական տեղեկությունների փոխանակումն իրականացնելու վերաբերյալ,

Մաքսային միության հանձնաժողովին առաջարկություններ ներկայացնել աշխատանքային խմբերի ստեղծման եւ դրանց վարմանը վերաբերող հարցերի շուրջ խորհրդակցություններ անցկացնելու վերաբերյալ,

Մաքսային միության հանձնաժողովի քննարկմանը ներկայացնել վիճակագրական հաշվառման հարցերի վերաբերյալ առաջարկություններ,

Մաքսային միության հանձնաժողովի քննարկմանը ներկայացնել արտաքին

առեւտրի վիճակագրության եւ փոխադարձ առեւտրի վիճակագրության վարման միասնական մեթոդաբանության կատարելագործման հարցերի վերաբերյալ առաջարկություններ,

Մաքսային միության հանձնաժողովի կողմից իր իրավասությանը վերապահված այլ հարցերի վերաբերյալ որոշումներ կայացնել:

Հոդված 4

Կողմերի միջեւ վեճերը, կապված սույն Արձանագրության մեկնաբանման եւ (կամ) կիրարկման հետ, լուծվում են առաջին հերթին խորհրդակցությունների եւ բանակցությունների միջոցով:

Եթե վեճի կողմերը վեճը չեն կարգավորում խորհրդակցությունների եւ բանակցությունների միջոցով վեճի մի կողմից վեճի մյուս կողմին դրանք անցկացնելու վերաբերյալ պաշտոնական գրավոր խնդրանք հղելու օրվանից վեց ամսվա ընթացքում, ապա, վեճի կողմերի միջեւ դրա լուծման վերաբերյալ այլ պայմանավորվածության բացակայության դեպքում, վեճի կողմերից յուրաքանչյուրը կարող է այդ վեճը փոխանցել Եվրասիական տնտեսական համայնքի դատարանի քննությանը:

Հոդված 5

Կողմերի համաձայնությամբ՝ սույն Արձանագրության մեջ կարող են կատարվել փոփոխություններ, որոնք ձեւակերպվում են առանձին արձանագրություններով:

Հոդված 6

Սույն Արձանագրության ուժի մեջ մտնելը, դրան միանալը կամ դրանից դուրս գալը սահմանվում է «Մաքսային միության իրավապայմանագրային դաշտի ձեւավորմանն ուղղված միջազգային պայմանագրերի ուժի մեջ մտնելու, դրանցից դուրս գալու եւ դրանց միանալու կարգի մասին» 2007 թվականի հոկտեմբերի 6-ի Արձանագրությամբ:

Կատարված է Սանկտ Պետերբուրգ քաղաքում, 2009 թվականի դեկտեմբերի 11-ին, մեկ բնօրինակով, ռուսերեն լեզվով:

Սույն Արձանագրության բնօրինակը պահվում է Մաքսային միության հանձնաժողովում, որը, լինելով սույն համաձայնագրի ավանդապահը, Կողմերից յուրաքանչյուրին կհղի հաստատված պատճենը:

(Ստորագրությունները)